ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնք
Ք. Եղեգնաձոր, Շահումյան 1, Հեռ.՝ +374 281 22020, Էլ. փոստ՝ yeghegnadzor.vayotsdzor@mta.gov.am

06 հուլիսի 2020 թ. թիվ 540

,,ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ,, ՀԿ
ՆԱԽԱԳԱՀ ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 01.07.2020 թվականի թիվ 345-75 գրության տեղեկացնում ենք, որ Եղեգնաձորի համայնքապետարանում անձնական տվյալների մշակումն իրականացվում է 2 էլեկտրոնային ծրագրերի միջոցով:

Յուրաքանչյուր կիսամյակ անձնագրային և վիզաների վարչության Եղեգնաձորի անձնագրային բաժանմունքից Վայոց ձորի մարզպետարան է ուղարկվում բնակչության վարման ռեգիստր, որը այնուհետև ուղարկվում է Եղեգնաձորի համայնքապետարան: Այն արտացոլում է Եղեգնաձորի համայնքի բնակիչների անձնական տվյալները և փաստացի տեղաշարժը:

Անձնական տվյալների մշակման մյուս ծրագիրը հանդիսանում է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը (ՀԿՏՀ), որի միջոցով աշխատակազմը վարում է բնակչության ռեգիստրը: Այս համակարգը իր մեջ ներառում է համայնքի բնակիչների հետևյալ անձնական տվյալները՝

1. Անուն, ազգանուն, հայրանուն
2. Ընտանիքի կազմ
3. Ազգակցական կապ
4. Հաշվառման տիպ
5. Հաշվառման ամսաթիվ
6. Հասցե
7. Կրթություն
8. Ազգություն, քաղաքացիություն
9. Սեռ
10. Անձնագիր, ՀԾՀ
11. Աշխատանք
12. Հեռախոս

Այս տվյալները մուտքագրվում և փոփոխվում են աշխատակազմի կողմից՝ տվյալների ճշգրտությունն ապահովելու նպատակով:

Հարգանքով՝

Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Լ. Մարտիրոսյան
հեռ.՝ 028125183

392